ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 03.10.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/53

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.09.2017թ. թիվ 03/26-3/16462-17 գրությամբ «Էլկոմպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 06.09.2017թ. թիվ ԴՎԱ/2967 գրության հիման վրա, 11.09.2017թ. թիվ 03/26-3/16462-17 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Էլկոմպ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. **<u>«Էլկոմպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Խորհուրդը կարծիք ստանալու նպատակով 12.09.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/16500-17 գրությամբ դիմել է «Էլկոմպ» ՍՊԸ-ին:

Խորհրդի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ Ընկերության կողմից գրավոր կարծիք չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 14.09.2017թ. ժամը 11:10-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ մի շարք չափաբաժինների մասով Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Ընկերության կողմից ներկայացվել են ապրանքների տեխնիկական բնութագրերը, որոնցում սակայն գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ: Միևնույն ժամանակ ,գնահատող հանձնաժողովի կողմից ուղարկված ծանուցման մեջ հստակ նշված չի եղել, թե որոնք են անհամապատասխանությունները, որոնք ենթակա են շտկման: Ընկերությունը շտկել է տեխնիկական բնութագրերը և կրկին ուղարկել գնահատող հանձնաժողովին, որոնք սակայն գնահատվել են անհամապատասխան հրավերի պահանջներին:

3. **<u>Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 06.09.2017թ. թիվ ԴՎԱ/2967 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԱՊՁԲ-7/2» ծածկագրով բաց ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) 2-րդ, 4-րդ, 5-րդ, 9-րդ և 10-րդ չափաբաժինների մասով «Էլկոմպ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից: Սահմանված կարգով «Էլկոմպ» ՍՊԸ-ն Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

«Էլկոմպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված վերոնշյալ չափաբաժինների մասով ապրանքների տեխնիկական բնութագրերի քննարկման արդյունքում պարզվել է, որ դրանք տարբերվում են հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրից և համարժեք չեն:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 51-րդ կետը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և Ընկերությանն առաջարկել շտկել վերը նշված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում Ընկերության կողմից ներկայացվել են տեխնիկական բնութագրերի շտկված տարբերակները, սակայն համաձայն պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված մասնագիտական եզրակացության, դրանք չեն համապատասխանում հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

Հիմք ընդունելով Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետը, հանձնաժողովը որոշել է 2-րդ, 4-րդ, 5-րդ, 9-րդ և 10-րդ չափաբաժինների մասով «Էլկոմպ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 14.09.2017թ. ժամը 11:10-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերը նշված գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ՍՑ-ԱՄ-2017/53 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/53 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԱՊՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով «Էլկոմպ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել:

2. Ընկերությունը հայտի թիվ 4.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԱՊՁԲ-7/2» ծածկագրով բաց ընթացակարգի շրջանակներում իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող՝ (1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ 9-րդ, 10-րդ) չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում է (են) «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԱՊՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

Նույն հավելվածի համաձայն՝ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «Էլկոմպ» ՍՊԸ-ն պարտավորվում է ներկայացնել իր կողմից հաստատված՝ հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.05.2017թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Էլկոմպ» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից՝ Ընթացակարգի 1-5-րդ, 7-10-րդ չափաբաժինների մասով, և վերջինիս ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.07.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1-րդ կետով արձանագրվել է, որ համաձայն պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված մասնագիտական եզրակացության՝ «Էլկոմպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում և հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում առկա է անհամապատասխանություն, ուստի հիմք ընդունելով Կարգի 51-րդ կետը, որոշվել է ծանուցել Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 02.08.2017թ. ծանուցել է «Էլկոմպ» ՍՊԸ-ին՝ նշելով, որ ***ներկայացված 1-5-րդ, 7-10-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում բացակայում են տվյալ ապրանքատեսակները բնութագրող հիմնական ցուցանիշների տվյալները և չեն համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին,*** ուստի հիմք ընդունելով Կարգի

51-րդ կետը, անհրաժեշտ է ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, քննարկելով պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված մասնագիտական եզրակացությունը, 25.08.2017թ. որոշել է Ընկերության հայտը Ընթացակարգի 2-րդ, 4-րդ, 5-րդ, 9-րդ և 10-րդ չափաբաժինների մասով մերժել:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.09.2017թ. թիվ 03/26-3/16462-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 06.09.2017թ. թիվ ԴՎԱ/2967 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում՝

ա. ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ,

գ. որպես ընտրված մասնակից մեկ անգամից ավելի հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

դ. օրենքով նախատեսված կարգով մասնակցի առնչությամբ կայացվել է որոշում գնումների գործընթացում հակամրցակցային վարքագծի՝ հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար,

ե. երբ առկա է սույն մասի 3-րդ կետով նախատեսված հանգամանքը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբության համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետը սահմանում է, որ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

Կարգի 49-րդ կետի համաձայն սույն կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը: Սույն կետում նշված փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: ***Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի***

պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Նույն Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հակահրդեհային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԱՊՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ 1-ին տեղը զբաղեցրած Մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 7-րդ կետի 7.7-րդ ենթակետի համաձայն՝ սույն հրավերի 7.5-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված՝ մասնակցի կողմից ներկայացվող

փաստաթղթերն ուղարկելու ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը: Սույն կետում նշված փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲԸԱՊՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով «Էլկոմպ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել 1-10-րդ չափաբաժինների մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.05.2017թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Էլկոմպ» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից՝ Ընթացակարգի 1-5-րդ, 7-10-րդ չափաբաժինների մասով և վերջինիս ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.07.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1-րդ կետի համաձայն, պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված մասնագիտական եզրակացության համաձայն՝ «Էլկոմպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում և հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրում առկա է անհամապատասխանություն, ուստի հիմք ընդունելով Կարգի 51-րդ կետը, որոշվել է ծանուցել Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.07.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությանը կցվել է ՀՀ ՋՈՒ Թիկունքի պետ-վարչության պետի ժ/պ-ի կողմից 28.07.2017թ. տրված մասնագիտական եզրակացությունը, որի համաձայն «Էլկոմպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը 1-5-րդ, 7-10-րդ չափաբաժինների մասով մի շարք պարամետրերով ***(մանրամասն ներկայացվել են եզրակացության մեջ)*** չեն համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրին, ուստի ենթակա են շտկման:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 02.08.2017թ. ծանուցել է «Էլկոմպ» ՍՊԸ-ին՝ նշելով, որ ***ներկայացված 1-5-րդ, 7-10-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում բացակայում են փվյալ ապրանքատեսակները բնութագրող հիմնական ցուցանիշների փվյալները և չեն համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին,*** ուստի հիմք ընդունելով Կարգի 51-րդ կետը, անհրաժեշտ է ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընկերությունը սահմանված ժամկետում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացրել է անհամապատասխանության շտկումը:

Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից 22.08.2017թ. տրվել է մասնագիտական եզրակացություն, համաձայն որի «Էլկոմպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը 2-րդ, 4-րդ, 5-րդ, 9-րդ և 10-րդ չափաբաժինների մասով մի շարք հատկանիշներով (մանրամասն նկարագրվել են մասնագիտական եզրակացության մեջ) չեն համապատասխանում ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրին:

Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից 22.08.2017թ. տրված մասնագիտական եզրակացությունը, մերժել է «Էլկոմպ» ՍՊԸ-ի հայտը՝ 2-րդ, 4-րդ, 5-րդ, 9-րդ և 10-րդ չափաբաժինների մասով:

Այսպես Կարգի 49-րդ կետը սահմանում է, որ ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, ***իսկ անհամապատասխանություն***

արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Միևնույն ժամանակ Կարգի 51-րդ կետը սահմանում է, որ տեխնիկական բնութագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է գնման գործընթացի շրջանակում սահմանված պարտավորություն, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Այսպիսով հիմք ընդունելով վերոհիշյալ նորմերի դրույթները, Խորհուրդը գտնում է, որ Կարգի 51-րդ կետի հիման վրա մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ պետք է մանրամասն նկարագրվի հայտնաբերված անհամապատասխանությունները, վերջինիս բովանդակությունը պետք է ընկալելի և հասանելի լինի մասնակցի համար, որը հնարավորություն կտա մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը և ներկայացնել գնահատող հանձնաժողովին:

Մինչդեռ Խորհուրդն արձանագրում է, որ 02.08.2017թ. «Էլկոմպ» ՍՊԸ-ին ուղարկված ծանուցման մեջ հստակ չի մատնանշվել, թե կոնկրետ որ հատկանիշների մասով Ընկերության ներկայացրած տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրին, այլ ընդամենը նշվել է , որ ներկայացված 1-5-րդ, 7-10-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում բացակայում են տվյալ ապրանքատեսակները բնութագրող հիմնական ցուցանիշների տվյալները և չեն համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին, ինչը բավարար չէ անհամապատասխանության բովանդակությունն ընկալելու և շտկելու համար: Միևնույն ժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ Պատվիրատուի

պատասխանատու ստորաբաժանման կողմից 28.07.2017թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին տրամադրված մասնագիտական եզրակացության մեջ մանրակրկիտ նկարագրվել են Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերում առկա անհամապատասխանությունները, որոնց վերաբերյալ սակայն Ընկերությունը չի ծանուցվել: Հետևաբար Ընկերության կողմից, սահմանված ժամկետում, արձանագրված անհամապատասխանությունը, համաձայն գնահատող հանձնաժողովի որոշման, չշտկելը չի կարող դիտվել որպես Ընկերության կողմից Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացում ստանձնած պարտավորության խախտում, քանի որ Ընկերությանն ուղարկված ծանուցման մեջ հստակ չեն նշվել շտկման ենթակա անհամապատասխանությունները, որի հետևանքով դրանք Ընկերության կողմից թերի են շտկվել:

Այսպիսով Խորհուրդը գտնում է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 11.09.2017թ. թիվ 03/26-3/16462-17 գրությամբ «Էլկոմպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.09.2017թ. թիվ 03/26-3/16462-17 գրությամբ «Էլկոմպ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00057219) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**